**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06-3**

ք. Գյումրի 10 մայիսի 2017 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Խ. Պողոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, <<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Զարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի թվով 1 մշակույթային օբյեկտի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2017 թ. հոկտեմբերի 1-ը:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում` այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ

դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 4.2-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 10 800 000.0 (տասն միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 1 800 000.0 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

3-րդ չափաբաժին 10 800 000.0 (տասն միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որից 1 800 000.0 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝_10 800 000.0 (տասն միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, Աշխատանքի կկատարվի միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 20-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած

վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ք. Գյումրի Գ. Նժդեհի 16 | ք. Գյումրի Մ. Խորենացի փող. 6շ. 87բն. |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ... մ/ճ |
| Հ/Հ ______ ՀՎՀՀ 05507437 | Հ/Հ 2050... |
| ______ (ստորագրություն) | ______ (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*10 մայիսի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ՇՄ ԲԸՀԱԾՁԲ 17/06-3 գնման պայմանագրի*

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**
**3-րդ չափաբաժին**
**Փանիկ համայնքի արվեստի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում**

| N/N | Աշխատանք ների և ծախսերի շիֆրը | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Արժեքը հազ.դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Միավոր | Ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | 11-57 | Պատերի գաջի սվաղի նորոգում առանձին տեղերում | մ² | 15 | 2,76 | 41,394 |
| 2 | 11-64 | Առաստաղի գաջի սվաղի նորոգում առանձին տեղերում | մ² | 10 | 3,11 | 31,071 |
| 3 | 11-80 | Պատերի և առաստաղի հին ներկից մաքրում,սվաղի հարթեցնում | 100մ² | 2 | 33,34 | 66,686 |
| 4 | 15-803 k=0,8 | Պատի պաստառների պոկում | 100մ² | 3,1 | 39,50 | 122,440 |
| 6 | 13-5 | Պատերի կերամիկական սալիկների քանդում | մ² | 24 | 0,71 | 17,148 |
| 6 | 23-174 | Փայտյա դռների ապամոնտաժում | 100մ² | 0,18 | 139,10 | 25,038 |
| 7 | 23-172 | Փայտյա լուսամուտ -ների ապամոնտաժում պատուհանագոգերի հետ միասին | 100մ² | 0,169 | 239,13 | 40,413 |
| 8 | 8-300 K-0,3 | Սանդղամուտքի փայտյա կոնստրուկցիաների ապամոնտաժում | մ³ | 0,4 | 10,95 | 4,379 |
| 9 | 23-143 | Սանդղամուտքի քարե բազիրքի և հատակի քանդում | մ³ | 3 | 9,11 | 27,336 |
| 10 | 23-77 23-228 23-240 | Շին. աղբի դուրս բերում, բարձում և տեղափոխում 12 կմ | տ | 8 | 5,24 | 41,953 |
| | | Ընդամենը | | | | 417,858 |
| | | Հարդարման աշխատանքներ | | | | |
| 1 | 11-107 | Պատուհանների թեքությունների ց/ավազե սվաղ դրսի կողմից | 100մ² | 0,1 | 70,20 | 7,020 |
| 2 | 12-277 | Պատուհանագոգի ցվիք -ների տեղադրում ցին - կապատ թիթեղից d=0,55 մմ | 100 մ² | 0,03 | 292,83 | 8,785 |
| 3 | 15-256 | Սան. Հանգույցի ներսի պատերի ց/ա սվաղ | 100մ | 0,31 | 226,23 | 70,131 |
| 4 | 14-422 | Պատերի և շեպերի լատեքսային ներկում քսահարթեցումով | մ² | 382,18 | 1,82 | 695,577 |
| 5 | 14-423 | Առաստաղների լատեքսային ներկում քսահարթեցումով | մ² | 145,04 | 2,16 | 312,894 |
| 6 | 13-133 | Պատի կերամիկական սալիկների տեղադրում | 100մ² | 0,31 | 780,16 | 241,850 |
| 7 | 34-323 34-335 | ՊՎՔ-ի նյութից թերթերով երեսպատված կախովի առաստաղների կառուցում | մ² | 5,4 | 7,33 | 39,565 |
| | 21-114 | Անջատիչի տեղադրում թաքցված լարանցման համար | 100հատ | 0,09 | 145,23 | 13,071 |
| | 21-119 | Էլեկտրական վարդակի տեղադրում թաքցված լարանցման համար | 100հատ | 0,12 | 116,51 | 13,981 |
| | 8-593-1 | Լուսատու առաստաղային մեկ շիկացման լամպով | հատ | 11 | 6,64 | 73,088 |
| | | Ընդամենը | | | | 1475,961 |
| | | Հատակներ | | | | |
| 1 | 23-166 | Հատակի կերամիկական սալիկների քանդում | 100մ² | 0,05 | 51,09 | 2,555 |
| 2 | 23-160 | Բետոնե հատակի քանդում | մ | 0,81 | 18,24 | 14,776 |
| 3 | 5-72 | Բետոնյա շերտի կառուցում պեմզաբետոնից Բետոն B-7.5 | մ | 0,81 | 35,61 | 28,843 |
| 4 | 5-85 5-86 | Ցեմենտե հարթ. շերտի իրականացում d=30 մմ | 100 մ | 0,054 | 150,08 | 8,104 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | 5-77 | Հատակի ջրամեկուսացում բիտումով և իզոգամով | 100 $մ^2$ | 0,054 | 142,86 | 7,714 |
| 6 | 5-115 | Հատակի կերամիկական սալիկների տեղադրում | 100մ | 0,054 | 903,24 | 48,775 |
| 7 | 23-163 | Տախտակե բեմի հատակի քանդում ջեռուցման խողովակների անցկացման համար | 100$մ^2$ | 0,05 | 53,27 | 2,664 |
| 8 | 5-118 | Տախտակե հատակի կառուցում 50 մմ տախտակով | 100$մ^2$ | 0,05 | 1382,34 | 69,117 |
| 9 | 67 5-12 | Տախտակե հատակի մասնակի նորոգում | $մ^2$ | 10 | 4,33 | 43,347 |
| 10 | 11-187 | Նրբատախտակե (ֆաներա) հատակի կառուցում նաև բեմի վրա | 100$մ^2$ | 1,45 | 435,82 | 631,940 |
| 11 | 5-124 | Հատակի ծածկ լամինատից սպունգով, շրիշակների հետ միասին նաև բեմի վրա | $մ^2$ | 145,04 | 6,77 | 981,702 |
| | | Ընդամենը | | | | 1839,537 |
| | | Դռներ և պատուհաններ | | | | |
| 1 | Ինֆ-տեղ | Ապակեփաթեթով մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող մաս/ | $մ^2$ | 17,75 | 28,43 | 504,692 |
| 2 | Ինֆ-տեղ | Նույնը չբացվող | $մ^2$ | 4,225 | 19,41 | 82,006 |
| 3 | Ինֆ-տեղ | Պլաստմասե 35սմ լայնության պատուհանագոգերի տեղադրում | մ | 14,3 | 3,68 | 52,590 |
| 4 | Ինֆ-տեղ | Դռների տեղադրում Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., խուլ 4մմ, | $մ^2$ | 18,27 | 42,14 | 769,884 |
| | | Ընդամենը | | | | 1409,172 |
| | | Սանդղամուտք | | | | |
| 1 | 1-938 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտում ձեռքով | 100$մ^3$ | 0,01 | 1088,51 | 10,885 |
| 2 | 1-1163 | Բնահողի շերտ-շերտ խտացում | 100$մ^3$ | 0,01 | 20,25 | 0,203 |
| 3 | 6-21 | Բետոնի հիմք պատրաստում ԲետոնB12,5 | $մ^3$ | 2 | 38,39 | 76,780 |
| 4 | 6-90 | Բետոնյա խարիսխի կառուցում Բետոն B-15 | $մ^3$ | 2,8 | 84,58 | 236,827 |
| 5 | շուկա | Մետաղական ցանց AI d-6մմ | կգ | 21 | 0,41 | 8,699 |
| 6 | 5-133 | Բազալտե սալիկներով հատակի և աստիճանի երեսապատում | մ | 5,8 | 13,67 | 79,308 |
| 7 | 9-94 | քառակուսի և ուղղանկյուն խողովակներից կոնստրուկցիաների մոնտաժ | տ | 0,258 | 1622,69 | 418,653 |
| 8 | 8-265 | Տանիքի պատրաստում ալիքավոր δ=0,55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով կավարամածի հետ միասին | 100$մ^2$ | 0,03 | 735,69 | 22,071 |
| 9 | 10-231 | Սանդղամուտքի առաստաղի և ճակտոնի երեսապատում կիսակարբոնատով | $մ^2$ | 3,6 | 10,23 | 36,846 |
| 10 | 33-762 | Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում երկու անգամ | տն | 0,258 | 23,42 | 6,042 |
| | | Ընդամենը | | | | 896,314 |
| | | Տանիքի վերակառուցում | | | | |
| 1 | 23-159 | Ասբոցեմենտե թերթերից տանիքի ծածկի քանդում | 100$մ^2$ | 2,39 | 23,59 | 56,374 |
| 2 | 8-18 k=0,3 | Տանիքի կավարամածի քանդում | $մ^2$ | 239,68 | 0,38 | 92,180 |
| 3 | 8-300 | Տանիքում լրացուցիչ կոնստրուկցիաների տեղադրում | $մ^3$ | 1,47 | 280,91 | 412,934 |
| 4 | 8-2 | Ծպեղնատուքի փոխում | մ | 6 | 6,18 | 37,067 |
| 5 | 8-265 | Տանիքի պատրաստում պրոֆիլավոր δ=0,55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով կավարամածի հետ միասին | 100$մ^2$ | 1,76 | 732,47 | 1289,154 |
| 6 | 8-277 | Ցինկապատ թիթեղից ջրհոս ճոռի և ցվիքի պատրաստում δ=0,55 մմ, տախտակամածի հետ միասին | 100մ | 0,32 | 1142,33 | 365,546 |
| 7 | 8-279 | Փոքր ծածկեր և միացման տեղեր ցինկապատ թիթեղից δ=0,55 մմ | 100$մ^2$ | 0,08 | 405,47 | 32,438 |
| 8 | 8-192 8-196 | Ø 160 մմ ցինկապատ թիթեղից ջրատարների տեղադրում H =1,5մ δ=0,55 | կ-տ | 4 | 14,54 | 58,175 |
| 9 | 8-301 | Ձեղնահարկի լուսամուտների պատրաստում շերտափեղկերով և ելարաններով | հատ | 1 | 81,77 | 81,770 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 | 23-213 | Տանիքի փայտյա կոնստրուկցիայի հակահրդեհային պաշտպանություն | մ³ | 7,3 | 7,82 | 57,090 |
| 11 | 23-214 | Տանիքի կավարամածի հակահրդեհային պաշտպանություն | 100մ | 0,176 | 24,75 | 4,356 |
| 12 | 23-77 23-228 23-240 | Շին. աղբի դուրս բերում, բարձում և տեղափոխում 12 կմ | տ | 6,5 | 5,24 | 34,087 |
| | | Ընդամենը | | | | 2521,171 |
| | | Սան. Հանգույց, ջրամատակարարում և կոյուղի | | | | |
| 1 | 19-69 | Լվացարանների ապամոնտաժում | 100հատ | 0,01 | 58,87 | 0,589 |
| 2 | 19-70 | Զուգարանակոնքի ապամոնտաժում | 100հատ | 0,01 | 72,85 | 0,729 |
| 3 | 17-17 | Կերամիկական լվացարանի տեղադրում | հատ | 2 | 18,58 | 37,163 |
| 4 | 17-57 | Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում | հատ | 1 | 32,52 | 32,519 |
| 5 | 17-53 | Լվացարանի ծորակի տեղադրում | հատ | 2 | 16,4737 | 32,947 |
| 6 | 23-115 | Անցքերի բացում հիմնական պատերում | տեղ | 1 | 1,03 | 1,035 |
| 7 | 23-132 | Անցքերի փակում պատերում | մ³ | 0,01 | 123,36 | 1,234 |
| 8 | 16-261 | Պոլիէթիլենե 15մմ խողովակ պատերի վրա | մ | 5 | 2,91 | 14,564 |
| 9 | 16-33 | Կոյուղու պլաստմասե խողովակի տեղադրում d-50մմ | մ | 4 | 1,29 | 5,144 |
| 10 | 22-365 | Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում | հատ | 2 | 1,66 | 3,318 |
| 11 | 22-366 | Եռաբաշխիկ 50x1 OOմմ | հատ | 6 | 0,71 | 4,238 |
| 12 | Ինֆ | Ստուգիչ 50մմ | հատ | 1 | 0,64 | 0,643 |
| | | Ընդամենը | | | | 134,122 |
| | | Ջեռուցում | | | | |
| 1 | 17-140 | Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում | հատ | 14 | 1,15 | 16,067 |
| 2 | 17-65 | Ներքին խողովակաշարի ապամոնտաժում,d=20մմ մինչև d=57 մմ | մ | 142 | 0,62 | 87,931 |
| 3 | 18-109 | Այումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H-500մմ | էկմ | 37,4 | 16,59 | 620,602 |
| 4 | շուկա | Մարկոցների կախիչ | հատ | 28 | 0,60 | 16,665 |
| 5 | շուկա | Մարկոցների միացման հանգույց Պոլիպրոպիլենային, Եռաբաշխիչ d=63x25x63մմ | հատ | 14 | 1,80 | 25,198 |
| 6 | 18-229 | Ջեռուցման մարկոցների կարգավորիչ փական Ф-15մմ | հատ | 14 | 2,60 | 36,437 |
| 7 | 18-229 | Ջեռուցման մարկոցների խցանային փական Ф-15մմ | հատ | 14 | 2,52 | 35,317 |
| 8 | 18-229 | Ջեռուցման մարկոցների օդահան | հատ | 14 | 2,52 | 35,317 |
| 9 | 16-262 | Պոլիպրոպիլենային, խողովակ d=26x3մմ | մ | 44 | 3,15 | 138,770 |
| 10 | 16-262 | Պոլիպրոպիլենային, խողովակ d=20x3մմ | մ | 75 | 2,88 | 216,185 |
| 11 | 16-262 | Պոլիպրոպիլենային, խողովակ d=16x2մմ | մ | 14 | 2,88 | 40,354 |
| 12 | շուկա | Պոլիպրոպիլենային, անկյունակ եռաբախշիկ 25-25-20 | հատ | 16 | 0,11 | 1,822 |
| 13 | շուկա | Պոլիպրոպիլենային, անկյունակ եռաբախշիկ 20-20-20 | հատ | 14 | 0,11 | 1,594 |
| 14 | շուկա | Պոլիպրոպիլենային, անկյունակ պրես dy=25մմ | հատ | 2 | 0,07 | 0,133 |
| 15 | շուկա | Պոլիպրոպիլենային, անկյունակ պրես dy=20մմ | հատ | 40 | 0,04 | 1,667 |
| 16 | շուկա | Պոլիպրոպիլենային, պրես անցում 25-20 | հատ | 6 | 0,05 | 0,307 |
| 17 | շուկա | Պոլիպրոպիլենային պրես անցում 20-16 | հատ | 28 | 0,05 | 1,433 |
| 18 | 46-50 | Անցքերի բացում հիմնական պատերում և միջնապատերում | 100 տեղ | 0,09 | 505,00 | 45,450 |
| 19 | 46-73 | Անցքերի փակում g/ա շաղախով հիմնական պատերում | մ³ | 0,16 | 134,19 | 21,471 |
| 20 | 16-219 | Համակարգի փորձարկում | 100մ | 1,33 | 8,88 | 11,815 |
| | | Ընդամենը | | | | 1354,535 |
| | | Սալվածք և բարեկարգում | | | | |
| 1 | 1-1133 | Գրունտների համահարթեցում ձեռքով | 100մ² | 0,4 | 23,82 | 9,527 |
| 2 | 27-79 | 15x30 չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում մուտեցման ճանապարհի համար | 100մ | 0,4 | 640,93 | 256,372 |
| 3 | 16-65 | H=16մմ հաստությամբ խճի շերտի իրականացում | 100մ² | 0,06 | 165,52 | 9,931 |
| 4 | 27-164 27-165 | Անցուղու ասֆալտապատում -5սմ | 100մ² | 1,817 | 549,17 | 997,842 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | 23-160 | Բետոնի սալվածքի քանդում | մ³ | 4,3 | 18,24 | 78,440 |
| 6 | 1-1133 | Գրունտների համահարթեցում ձեռքով | 100մ² | 0,3 | 23,82 | 7,145 |
| 7 | 16-62 | H=12սմ հաստությամբ խճաշերտի փռում | 100մ² | 0,29 | 111,24 | 32,261 |
| 8 | 27-164<br>27-165 | Սալվածքների ասֆալտապատում -3սմ | 100մ² | 0,29 | 338,99 | 98,307 |
| 9 | 27-79 | 15x30 չափերի բետոնե եզրաքարերի տեղադրում մուտեցման ճանապարհի համար | 100մ | 0,33 | 640,93 | 211,507 |
| | | Ընդամենը | | | | 1701,331 |
| | | Ընդամենը՝ շինարարական աշխատանքներ | | | | 11750,000 |
| | | ԱԱՀ 20 % | | | | 2350,000 |
| | | Ընդհանուրը | | | | 14100,000 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է Փանիկ համայնքի արվեստի դպրոցի շենք հասցեում:

* Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ ____________ ՀՎՀՀ 05507437

____________
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ք. Գյումրի Մ. Խորենացի փող. 6շ. 87բն.
«Ինեկոբանկ» [illegible] մ/ճ

Հ/Հ 205012[illegible]280 ՀՎՀՀ 055[illegible]7917

____________
(ստորագրություն)

Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*10 մայիսի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06-3 գնման պայմանագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԹՎՈՎ 1 ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՕԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Փանիկ համայնքի արվեստի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը | **2017 թվականի հոկտեմբերի 1-ը** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը | **2017 թվականի հոկտեմբերի 1-ը** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՀ ______________ ՀՎՀՀ 05507437

______________
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ք. Գյումրի Մ. Խորենացի փող. 6շ. 87բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ [illegible] ՀՎՀՀ 05537917

______________
(ստորագրություն)

Կ.Տ

*Հավելված թիվ 3*
*10 մայիսի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06-3 գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 20 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Փանիկ համայնքի արվեստի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 10800000.0 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ ______ ՀՎՀՀ 05507437
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ք. Գյումրի Մ. Խորենացի փող. 6շ. 87բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Հ/Հ 205[illegible]280[illegible]5537917
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*10 մայիսի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06-3 գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը __________
հհ ___________________
______________________
հվհհ _________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը __________
հհ___________________
______________________
հվհհ_________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«____» «________________» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս__________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախազծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված թիվ 4.1*
*10 մայիսի 2017 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06-3 գնման պայմանագրի*

**ԱԿՏ N**

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
-----------------------------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N -----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06-3
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Գյումրի 10 մայիսի 2017 թ.

<<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Արտյոմ Զարգարյանի (Նույն. քարտ 006636807, կոդ 016), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1.ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Շիրակի մարզպետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ Շիրակի մարզի մշակույթային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06 ծածկագրով ԲԸՀ գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ընկերության անվանումը՝ <<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ
Ընկերության հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Մ. Խորենացի 6/87
Ընկերության բանկի անվանումը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ «Գյումրի» մ/ճ
Ընկերության Հ/Հ 205012204280-1001
Ընկերության ՀՎՀՀ 05537917
տնօրեն՝ Ա. Զարգարյան

_________________
(ստորագրություն)

գլխ... ...արյան

_________________
(ստորագրություն)

| | |
|---|---|
| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N** (պայմանագրի կատարման ապահովում) | |
| 2. Ներկայացման ամսաթիվը' "___" ___ 20___թ. | |
| 3. Ընկերություն (այսուհետ' վճարող)' <<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ | |
| 4. Վճարողի բանկը' « Ինեկոբանկ » ՓԲԸ «Գյումրի» մ/ճ | |
| 5. Վճարողի հաշվի համարը' 205012204280-1001 | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ' 05537917 | |
| 7. Վճարողի ՀԾՀ' | |
| 8. Շահառու' ՀՀ Շիրակի մարզպետարան | |
| 9. Շահառուի ՀՎՀՀ' 05507437 | |
| 10. Շահառուի բանկը' ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | |
| 11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ N 900005000758 | |
| 12.Գումարը թվերով և բառերով' 1 100 000.0 / մեկ միլիոն հարյուր հազար/ | |
| 13.Արժույթը (բառերով և կոդով)' ՀՀ դրամ, AMD | |
| 14.Գործարքի /վճարման/ նպատակը' Պայմանագրի ապահովում | |
| 15.Պայմանագրի ծածկագիրը' ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/06-3 | |
| 16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից'— էջ | |
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները'<br>/____________________/<br>18.բ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը' "___" ___ 20___թ. |